



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ներքին գործերի նախարարության
կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ
Մ. Մուրադյան
« 11 » 01 2024 թ.

Կ Ա Ր Ծ Ի Ք

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Գայանե Կարենի Մելիքյանի՝ «Հանձնման (էքստրադիցիայի) գործընթացի կարգավորման առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում» թեմայով ԺԲ.00.04 - «Դատական իրավունք - դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, վարչական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ռ. Հովհաննիսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ռ. Մարտիրոսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Գ.Գ. Ստեփանյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Մ.Ա. Մուրադյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Զ.Հ. Հայրապետյանի, քննարկեց Գայանե Մելիքյանի՝ «Հանձնման (էքստրադիցիայի) գործընթացի կարգավորման առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում» թեմայով ԺԲ.00.04 - «Դատական իրավունք - դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, վարչական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց ներքոթվարկյալ հետևություններին:

Գ. Մելիքյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում և աամմանավորված է հետևյալ հանգամանքներով:

Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն մասնակցում է միջազգային համագործակցությանը գլոբալ բնույթ ունեցող տարբեր խնդիրների, ներառյալ՝ հանցավորության դեմ պայքարի և մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ կապված: Այդ խնդիրների լուծումը պահանջում է միջազգային հանրության ջանքերի միավորում և համակարգում, և ենթադրում է միջազգային համագործակցության ինտենսիվ զարգացում:

Նախորդ դարի 90-ական թվականներից սկսած ՀՀ-ը վավերացրել է հանձնման (էքստրադիցիայի) հետ կապված հարաբերություններ կարգավորող հիմնական բազմակողմ միջազգային պայմանագրերը, իսկ մի շարք պետությունների հետ էլ ՀՀ-ն ունի երկկողմ միջազգային պայմանագրեր, որոնք, ի թիվս այլնի, կարգավորում են նաև հանձնման (էքստրադիցիայի) ընթացքում ծագող հարաբերությունները:

Հանձնման (էքստրադիցիայի) ինստիտուտը, հանդիսանալով հանցավորության դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության ուղղություններից մեկը, ապահովում է քրեական դատավարության նպատակի իրագործումը, հասարակության մեջ հավասարության և արդարության ստանդարտների պահպանումը, պատժի անխուսափելիությունը՝ անկախ տարբեր երկրների տարածքային յուրիսդիկցիայից:

Միևնույն ժամանակ, այս պահին դեռ չի ընդունվել այն իրավական ակտը, որը համապարփակ կարգավորման կենթարկեր իրավակիրառ պրակտիկայի և մարդու իրավունքների ապահովման տեսանկյունից կարևորվող այս բնագավառը: Ակնհայտ է, որ 1998 թվականի քրեական դատավարության օրենսգրքի՝ դեռևս ուժը չկորցրած դրույթներն «ի զորու» չեն լուծել պրակտիկայի առջև ծառայած բազմաթիվ խնդիրները, որոնք նախանշել և խորությամբ հետազոտել է հեղինակը: Ավելին՝ այս տեսանկյունից «բարվոք» չէ նաև հանձնման (էքստրադիցիայի) ոլորտի կարգավորմանը նվիրված միջազգային իրավական դաշտը, որը նույնպես զերծ չէ բացերից և կոլիզիաներից:

Այլ կերպ ասած՝ հանձնման (էքստրադիցիայի) ոլորտում միջազգային իրավական բազայի ներկայիս վիճակը, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում

կուտակված խնդիրները, դրանց լուծմանն ուղղված պրակտիկ փորձը խորը գիտական վերախնամաստավորման կարիք ունի:

Ատենախոսության թեմայի արդիականության մասին են վկայում նաև այն հանգամանքը, որ սույն հիմնախնդիրը բազմաթիվ անգամ քննարկման առարկա է դարձել ՀՀ և միջազգային բարձ դատական ատյաններում:

Այս ամենն անխոս վկայում է հանձնման (էքստրադիցիայի) կարգի և պայմանների իրավական կարգավորման անհրաժեշտության մասին:

Իրականացված հետազոտությունն ընդգրկել է ծավալուն առարկա՝ հանձնման գործընթացը կարգավորող միջազգային և ներպետական իրավական ակտերը, ՀՀ սահմանադրությունը, քրեական դատավարության գործող և նախկին օրենսգրքերը, օտարերկրյա պետությունների քրեադատավարական օրենսդրությունը և «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Աշխատանքի գլուխներում ատենախոսը մանրամասն հետազոտել է առարկայի՝ վերը նշված տարրերը:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ ատենախոսը հաջողությամբ լուծել է հետազոտության խնդիրները, ինչի շնորհիվ իրականացվել է հետազոտության նպատակը, այն է՝ վեր հանել և չեզոքացնել ազգային օրենսդրության մեջ առկա բացերը, բացահայտել քննարկվող ինստիտուտի կիրառման ընթացքում առաջացող խնդիրները, ներկայացնել դրանց լուծմանն ուղղված հստակ առաջարկներ, համապատասխանեցնել օրենսդրությունն ու առկա պրակտիկան միջազգային չափանիշներին և կարգավորումներին, ապահովել ՀՀ կողմից միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը և հնարավորինս բացառել այս գործընթացում անձանց իրավունքների խախտումները:

Հետազոտության գիտական նորույթը հիմնավորվում է այն հանգամանքով, որ ներկայացված ատենախոսությունը հայրենական իրավագիտության շրջանակներում առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկվել և վերլուծվել են հանձնման (էքստրադիցիայի) քրեադատավարական հիմնախնդիրները:

Հետազոտության գիտական նորույթն ապահովվել է նաև ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթներով:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է պատշաճ մեթոդաբանական բազայով, գրականության աղբյուրներով, իրավական և փորձառական հիմքով:

Հատկապես, դրվատանքի են արժանի հեղինակի կողմից դատական պրակտիկայի նյութերի, այդ թվում՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վերաքննիչ և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների, այլ պետությունների դատարանների դատական ակտերի ուսումնասիրումը և դրանցում արտահայտված դիրքորոշումների ու հայացքների ստեղծագործական կիրառումը ատենախոսությունում արված հետևությունները հիմնավորելիս:

Այս ամենը թույլ է տալիս ատենախոսի հետևություններն ու առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրանց:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները.

1. Ատենախոսության 89-րդ էջում հեղինակը, հղում կատարելով «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագծի 32-րդ հոդվածի 3-րդ մասի վրա, նշում է, որ մինչև վարույթը դատարան փոխանցելը կատարվող բոլոր գործողություններին թարգմանչի մասնակցության ապահովման պարտականությունը դրված է դատախազության և *հետաքննության մարմնի* (ընդգծում իմն է - Ա. Հովհաննիսյան) վրա: Մինչդեռ մեջբերված դրույթում հետաքննության մարմնի մասին խոսք չկա:

2. Օտարերկրյա պետության կողմից հետախուզվող անձանց արգելանքի վերցնելու (ձերբակալելու) հիմնախնդրի քննարկման շրջանակներում հեղինակը՝ ատենախոսության 103-րդ և 104-րդ էջերում արդարացիորեն բարձրացնում է նաև ՀՀ տարածքում հայտնաբերված՝ օտարերկրյա պետության կողմից հետախուզվող անձանց նկատմամբ դատավարական գործողությունների իրականացման

իրավական հիմքի և ընթացակարգի բացակայության հիմնահարցը, սակայն որևէ լուծում այդ առնչությամբ չի առաջարկում:

Կարծում ենք, որ նկարագրված իրավիճակը տարբերվում է ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի կիրառմամբ հետախուզման դեպքերից, և պահանջում է իրավական հատուկ (տարբերվող) լուծումներ:

3. Քրեական վարույթի փոխանցման հիմնախնդիրների հետազոտման շրջանակներում հեղինակը՝ ատենախոսության 163-րդ և 164-րդ էջերում առաջարկում է «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագծում կատարել լրացում և նախատեսել, որ օտարերկրյա պետության՝ քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությանը կից ՀՀ իրավասու մարմիններին ուղարկվի *բացառապես քրեական գործի բնօրինակը* (ընդգծում իմն է – Ա. Հովհաննիսյան), հիմնավորելով այդ առաջարկն նրանով, որ ՀՀ իրավասու մարմինների կողմից տվյալ գործով կայացված որոշումը կլինի վերջնական, իսկ քննության արդյունքներով բավարարված չլինելու դեպքում հայցող պետությունը չի կարողանա վերսկսել վարույթը:

ՀՀ իրավասու մարմիններին *բացառապես քրեական գործի բնօրինակն* ուղարկելը որպես օրենք դրույթ ամրագրելն ինքնին, կարծում ենք, չի բացառում հայցող պետության կողմից՝ քննության արդյունքներով բավարարված չլինելու դեպքում, վարույթը վերսկսելու հնարավորությունը, քանի որ, նախ՝ հայցող պետությունը, փոխանցելով քրեական վարույթի նյութերը ՀՀ, արդեն իսկ փոխանցում (գիջում) է իր յուրիսդիկցիան (այս հանգամանքը շեշտվել է նաև հեղինակի կողմից), և հետևաբար՝ վարույթի նյութերի բնօրինակ կամ կրկնօրինակ լինելու հարցը դառնում է երկրորդական, և երկրորդ՝ ոչինչ չի խանգարում տվյալ պետությանն իր օրենսդրությունում ամրագրելու քրեական վարույթը՝ դրա նյութերի կրկնօրինակով վերսկսելու հնարավորություն: Հետևաբար, այս հարցում էականը հայցող պետության՝ իր իսկ միջազգային «բարի համբավը» պահպանելու շահն է:

4. Ատենախոսության 164-րդ էջում հեղինակը «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագծում առաջարկում է նաև կատարել լրացում, որի համաձայն օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից իրականացված քննության ընթացքում հավաքված ապացույցները պետք է համարվեն թույլատրելի

(...), եթե դրանք չեն ստացվել մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարմամբ կամ քրեական վարույթի սկզբունքների խախտմամբ: Որպես հիմնավորում իր կողմից ներկայացված առաջարկի՝ հեղինակը մատնանշում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «Ապացույցի թույլատրելիությունը որոշվում է այն ձեռք բերելու պահին գործող օրենքով»:

Կարծում ենք, որ նկարագրված իրավիճակում ապացույցի թույլատրելիության վերաբերությամբ ծագող հնարավոր վեճի առարկան *ժամանակի մեջ* քրեական դատավարության օրենսգրքի գործողության կիրառման հանգամանքները չեն. տվյալ հարցը պետք է լուծվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կանոնով, այն է՝ «Վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, ներառյալ վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած ապացույցները համարվում են թույլատրելի, քանի դեռ պատշաճ իրավական ընթացակարգով հակառակը չի հաստատվել»:

Ինչպես երևում է վերոգրյալ նկատառումների բովանդակությունից, դրանք կրում են մասնավոր բնույթ, չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են հեղինակի հետագա աշխատանքներն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. Գայանե Կարենի Մելիքյանի՝ «Հանձնման (էքստրադիցիայի) գործընթացի կարգավորման առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է հանձնման (էքստրադիցիայի) քրեադատավարական հիմնախնդիրների համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ ԺԲ.00.04 – «Դատական իրավունք – դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, վարչական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ:

Գայանե Մելիքյանի ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը պատրաստվել է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ռ. Հովհաննիսյանի կողմից (քննարկվել և հավանության է արժանացել ամբիոնի՝ 2024 թ.-ի հունվարի 11-ի նիստում, արձանագրություն № 3):

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պետի պարտ. կատ., ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ռ. Հովհաննիսյանի
« 11 » 01 2024 թ.

Ա.Ռ. Հովհաննիսյանի ստորագրությունը հավաստում եմ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Գ.Գ. Մալխասյան

